ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 27-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 05-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 27.11.2023թ. N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 05 » դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հոսիկար շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 27.11.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման անհրաժեշտությունը՝

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են 27.11.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կապալառուի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«Հոսիկար շին» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ Շիրակի մարզ, Պեմզաշեն, 2 թ, 1 փակ 2
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 05558974
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1150012205205266
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 05 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
« 27 » նոյեմբերի 2023թ. կնքված
N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/09» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/508	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/	10 258 800	**10 258 800**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հոսիկար շին» ՍՊԸ
Հասցե՝ Շիրակի մարզ, Պեմզաշեն, 2 թ, 1 փակ 2
ՀՎՀՀ՝ 05558974
Հ/Հ՝ 1150012205205266
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Հ. Ջոսիանիսյան

/ստորագրություն/
Կ.Տ